Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
քաղաքացիների ընդունելության և դիմումների, բողոքների ու առաջարկությունների վերաբերյալ
11.01.2017թ. դրությամբ

1. Ստացվել են դիմումներ ընդամենը՝ **9.927**
որից՝

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
առաջարկություն	18	0.1
դիմում	8.459	85.2
բողոք	1.450	14.6
կրկնակի	280	2.8
կոլեկտիվ	45	0.4

2. Վերցված է վերահսկողության ընդամենը՝ **1260**

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
դիմում	320	25.2
բողոք	940	76.6

3. Ըստ հարցերի բնույթի

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
բնակարանային	165	1.6
կոմունալ-կենցաղային	7	0.07
շինարարական	15	0.15
արդձեռ (տրանսկապ)		
գյուղատնտեսական	5	0.05
բնութ. պահպանութ.		
առևտրի		
կենսաթոշակային	255	2.7
առողջապահության	171	1.7
կրթական և մանկ. հիմն.		
գիտութ. կուլտուրա		
ֆինանսական	1.138	11.4

օրենսդրական	11	0.1
քաղ. և որդեգրման հաշվառման		
աշխ. և աշխատավարձի	467	4.7
ապարատային	352	3.5
այլ հարցեր	7.338	73.9
սեփականաշնորհում	3	0.03

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2016Թ. ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ, ԲՈՂՈՔՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ստացված 9927 նամակներից մոտ 0.1%-ը եղել են առաջարկություններ: Վերցված է վերահսկողության 1260 բողոք դիմումներ: Բողոքները կազմել են շուրջ 76.6%, որոնցով հիմնականում վիճարկվել են դատական ակտեր: Միաժամանակ, դրանց մի մասը բովանդակել է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդություն:

Նշված նամակներից մոտ 76.6%-ը տարաբեր հարցերով դիմումներ են, որոնց գերակշռող մասը՝ մոտ առնչվում է ֆինանսական հարցերին, մոտ 4.7%-ն աշխատանքի և աշխատավարձի հարցերին: Ընդ որում՝ ֆինանսական հարցերին վերաբերող դիմումները ստորաբաժանվում են՝

- դիմումատուների կողմից դատարան ներկայացրած գումարների պահանջների վերաբերյալ դիմումներ (որոնք հիմնական մասն են կազմում).
- դատարան դիմելիս պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ դիմումներ:

Դիմումատուները դատական ակտի հետ չհամաձայնվելով, իրենց դիմումները հղել են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը՝ խնդրելով աջակցել իրենց դատարանում ներկայացրած պահանջների վերաբերյալ արդար դատական ակտ կայացնելու կամ պետական տուրքից ազատելու հարցերով: Դիմումներին պատասխանվել է, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը նման հարցերին միջամտելու, ինչպես նաև վարչական կարգով պետական տուրքից ազատելու իրավասությամբ օժտված չէ, որ նման վեճերի քննարկման իրավասությունն օրենքով վերապահված է դատարաններին: Դիմումների որոշ մասը՝ 1.6%-ը առնչվում է բնակարանային, 0.07%-ը կոմունալ-

կենցաղային, 0.1%-ը առողջապահության, իսկ մնացած՝ մոտ 73.9% դիմումները վերաբերում են տարբեր ոլորտներին առնչվող խնդիրներին, որոնց կապակցությամբ ուղարկվել են օրենքով սահմանված սպառիչ պատասխաններ ու տրվել պարզաբանումներ:

Հայտնվում է, որ ստացված դիմումներից 9.814-ին տրվել է պատասխան: Ամփոփումների արդյունքներով տեղեկանքը կազմելու պահին 113-ի քննարկումը դեռ ընթացքի մեջ է: